«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի մասնակցությունը հաստատության մեթոդմիավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին

Առարկան՝ մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Մարգարիտա Ավագյան

Ուսումնական հաստատություն՝ Խ. Սամուելյանի անվան թիվ 47 միջնակարգ դպրոց

Երևան 2023

Հետազոտության թեմա՝ Ուսուցչի մասնակցությունը հաստատության մեթոդմիավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին

Հատուկ հարց՝ Առարկայական մեթոդական միավորումների դերը դպրոցում

Բովանդակություն

Ներածություն .....էջ 4

Գլուխ 1. Մեթոդական միավորման դերն ու կարևորությունը.....էջ 6

Գլուխ 2. Առարկայական մեթոդական միավորման դերը ուսուցիչների կայացման գործում.....էջ 12

Եզրակացություն.....էջ 16

Գրականության ցանկ.....էջ 18

Ներածություն

Կրթության պահանջների բնականոն իրականացումը մեծապես պայմանավորված է ուսուցչի աշխատանքից. որքան բարձր են վերջինիս մասնագիտական ու մարդկային որակները, ինքնազարգանալու, նորը սովորելու ցանկությունը, այդքան ուսուցիչը շատ բան ունի տալու մատաղ սերնդին: Ուսուցիչը չի կարող սահմանափակվել ինքնուրույն գործունեությամբ. ինքնակրթության, ինքնազարգացման գործընթացներին գալիս է փոխլրացնելու աշխատանքային համագործակցությունը այլ մանկավարժական աշխատողների հետ՝ նպատակ ունենալով ամբողջացնել ողջ մանկավարժական ներուժը: Առհասարակ ցանկացած միջավայրում փոխօգնությունը, համագործակցությունը, օրինակելի փորձի փոխանակումը, այդ փորձի հիման վրա սեփական քայլերի մշակումը այն սկզբունքներն են, որոնց հիման վրա կարելի է կառուցել արդյունավետ գործունեություն:

Դպրոցում ուսուցչի մեթոդական աշխատանքն արդյունավետ կազմակերպող առաջնային մարմինն առարկայական մեթոդական միավորումներն են: Այն նպաստում է ուսուցչների մասնագիտական վարպետության, մեթոդական կուլտուրայի, ստեղծագործական ներուժի բարձրացմանը: Առարկայական մեթոդմիավորումների աշխատանքներում որոշակի կարևորություն է տրվում նաև ուսուցիչների ինքնակրթության կազմակերպմանը: Միավորման ներսում շատ կարևոր են յուրաքանչյուր ուսուցչի անհատական դերակատարումը: Այս կառույցի ճիշտ ու արդյունավետ աշխատանքի շնորհիվ հնարավոր կլինի բարձրացնել ոչ միայն կրթության որակը, այլև լուծել զանազան այլ խնդիրներ:

Հետազոտության նպատակը. Այս թեման ընտրել եմ ցույց տալու համար մեթոդմիավորման կարևորությունը դպրոցում, նրա գործունեությունը: Շեշտը դնելով միավորման կարևոր դրույթ հանդիսացող ուսուցիչների համագործակցության կարևորության վրա: Յուրաքանչյուր ուսումնական հաստատությունում շատ կարևոր է մանկավարժական աշխատողների միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատումը, ինչը կարող է ստեղծել գործընկերային ու համագործակցային առողջ միջավայր: Վստահաբար կարող ենք ասել, որ նման պարագայում աշխատանքը դպրոցում կլինի էլ ավելի համակարգված ու արդյունավետ՝գործունեության հիմքում դնելով սովորողների որակյալ ու ժամանակակից կրթություն ստանալու իրավունքը:

Հետազոտության արդիականությունը. Թեմայի արդիականությունը հանդիսանում է նրանում, որ հենց առարկայական մեթոդական միավորման աշխատանքներում է կազմակերպվում և քննարկվում այս զարգացող աշխարհում ուսուցչի առջև ծառացած նոր մարտահրավերները, ժամանակակից խնդիրներն ու պահանջներն: Մեթոդմիավորման շրջանակներում է ուսուցիչն կարողանում լուծում տալ իր խնդիրներին, զարգացնում իր մեթոդիկաները և ձեռք բերում նոր կարողություններ:

Գլուխ 1. Մեթոդական միավորման դերն ու կարևորությունը

ՀՀ կրթական համակարգի կառավարման ոլորտում իրականացվող բարեփոխումները մեծապես պայմանավորված են նոր կրթական չափորոշիչներով, հաստատությունների կառավարման սկզբունքների, գործառույթների, մեթոդների, բովանդակության նորացումով, կրթության գործի կազմակերպման ժամանակակից տեխնոլոգիաներով: Ակնհայտ է, որ նման բարեփոխումները, բարձր տեխնոլոգիաների աննախադեպ զարգացումը ենթադրում են մարդկանց կրթական մասնագիտական պատրաստության բարձր մակարդակի ապահովում: Այդ համատեքստում գերակա են համարվում կրթության որակը, դպրոցի զարգացումը, արդյունավետ կառավարումը, ուսուցիչների մասնագիտական աճը և կայացումը: Ուսուցիչների համար պարտադիր պայման է դառնում համապատասխան նոր մեթոդամանկավարժական գիտելիքներով համալրել իրենց մասնագիտական գործունեությունը:

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ, որոնցից կարևորներից է մեթոդական միավորումները: Մեթոդական միավորման համտեղ աշխատանքը ուսուցչի համար ստեղծում է հնարավորություն սովորել, սովորեցնել, ուսումնասիրել, հետազոտել՝ բարձրացնելով իր մասնագիտական որակները:

Մեթոդմիավորումները կազմվում են դպրոցի մանկավարժական խորհուրդի որոշմամբ: Մանկավարժական խորհուրդը խորհրդակցական մարմին է, որը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում[1] :

Դպրոցի աշակերտների թվով պայմանավորված՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում ձևավորվում են առարկայական մեթոդական միավորումներ մոտ կամ հարակից առարկաներից: Առարկայական մեթոդական միավորումներն ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Մյուս դեպքերում կարող են ձևավորվել մեթոդական միավորումներ՝ հարակից առարկաների ուսուցիչներից: Դասվարների համար ստեղծվում է տարրական կրթության մեթոդական միավորում[2] :

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=114876
[2] https://www.arlis.am/documentview.aspx?docid=114876

Առարկայական մեթոդմիավորման աշխատանքներն ընդհանրացնում և վերահսկվում է հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնական գծով տնօրենի տեղակալի կողմից:

Առարկայական մեթոդական միավորումը պատասխանատու է տվյալ առարկայի համար սահմանված պետական ծրագրի կատարման համար և շարունակ վերահսկում է այդ գործընթացը[3]:

Ամիսը մեկ անգամ հրավիրվում է առարկայական մեթոդական միավորման նիստ, որը ղեկավարում է մեթոդական միավորման նախագահը: Մեթոդական միավորման աշխատանքները ղեկավարում է դպրոցի տնօրենի կողմից առաջարկված և մանկավարժական խորհրդի հավանությանն արժանացած ամենափորձառու ուսուցիչներից մեկը, ով աչքի է ընկնում նաև իր մարդկային որակներով, կառավարման փորձով ու մասնագիտական ու մեթոդամանկավարժական գիտելիքներով: Նախագահը ներկաներին ծանոթացնում է նիստի նախօրոք կազմված օրակարգը և հաստատվելու դեպքում շարունակում նիստի ընթացքը: Նիստի ժամանակ քննարկվող յուրաքանչյուր հարցի վերաբերյալ ընդունված որոշումները պետք է արձանագրվեն տվյալ նիստի արձանագրության մեջ:

Ուսումնական տարվա սկզբի մեթոդական միավորման նիստի արձանագրությունում պետք է հստակ նշված լինի առարկային համապատասխան թեմատիկ և գործնական աշխատանքների տեսակները և քանակը:

Առարկայական մեթոդական միավորումներն իրենց կատարած մատենավարական աշխատանքներով հաշվետու են ուսումնական գծով փոխտնօրենին: Այդպիսի փաստաթղթերից են.

- մեթոդական միավորման տարեկան աշխատանքային պլան
- մեթոդական միավորման նիստերի արձանագրություններ
- անցած ուսումնական տարվա աշխատանքի վերլուծություն
- առարկայական մեթոդական միավորման անդամների կատարած մեթոդական, ուսումնադաստիարակչական հետազոտություններ
- փոխադարձ դասալսումների արձանագրություններ
- ատեստավորում անցած ուսուցիչների հավաստագրեր
- իրականացրած արտադպրոցական միջոցառումների հաշվետվություններ

[3] Առաքելյան Մ., Առարկայական մեթդական միավորումների գործունեության հիմնական ուղղություններն արդի պայմաններում, «Մանկավարժաման միտք», Եր., 2015, թիվ 3, էջ 113:

- հաշվետվություն անհրաժեշտ մեթոդական ու դիդակտիկ աջակցության մասին:

Առարկայական մեթոդական միավորումը նպաստում է ուսուցիչների մասնագիտական վարպետության, մեթոդական կուլտուրայի, ստեղծագործական ներուժի բարձրացմանը: Առարկայական մեթոդմիավորումների աշխատանքներում որոշակի կարևորություն է տրվում նաև ուսուցիչների ինքնակրթության կազմակերպմանը: Մանկավարժական վարպետության կատարելագործման նպատակով մեթոդմիավորումը կազմում է դասերին փոխադարձ այցելություն, որը կարևոր նշանակություն ունի «վարպետ» ուսուցչի և սկսնակ մասնագետների միջև ծավալվող գործունեությունը:

Մեթոդական աշխատանքի ժամանակակից մակարդակի ապահովման համար կրթական հաստատությունում կարևոր է կազմակերպել աշխատանք՝ ուսուցիչներին նորմատիվ փաստաթղթերի, մեթոդական և առարկայական նոր գրականության ծանոթացման ուղղությամբ: Մեթոդմիավորման նիստերում կարելի է ուշադրություն հրավիրել այն հարցերին, որոնք կապված են հանձնարարականների, հուշագրերի, ծրագրի առավել բարդ թեմաների քայլաշարի կազմանը, առաջավոր մանկավարժական փորձի ուսումնասիրմանն ու տարածմանը:

Առարկայական մեթոդմիավորումների մեթոդական աշխատանքը կարող է ունենալ կազմակերպման հետևյալ ձևերը.

- դասախոսություն
- սեմինար
- ստեղծագործական բանավեճ
- կոլեկտիվ ստեղծագործ աշխատանքի ժամ
- գործնական խաղեր
- որոնողա-ստեղծագործական աշխատանքներ, նախագծեր

Կարող են կազմակերպվել նաև գործնական աշխատանքներ, բաց դասեր, ըստ առարկաների արտադասարանական միջոցառումներ, առարկայական շաբաթներ, մրցույթներ, գիտագործնական համաժողովներ, մեթոդական փառատոներ և այլ մեթոդական միջոցառումներ:

Կանգ առնեն այն հարցի շուրջ, թե ինչպե՞ս պետք է կազմակերպել մեթոդմիավորման արդյունավետ աշխատանքը դպրոցում: Աշխատանքային պլանում պետք է առանձնացնել հիմնական ուղղությունները, օրինակ՝ ուսուցման որակի բարձրացում, դաստիարակչական գործընթացի կատարելագործում՝ միտված երեխայի անձի զարգացմանը: Մեթոդմիավորման աշխատանքն անհրաժեշտ է կառուցել

ընդհանուր մանկավարժական խնդիրների շուրջ, որն այդ պահին ծառացել է դպրոցի առջև: Ընդհանուր թեմայի քննարկման ընթացքում մեթոդմիավորման նիստերում ցանկալի է կոնկրետացնել այն: Թեմայի որոշումից հետո անհրաժեշտ է նշել դրա գործնական ելքի ձևը. ելույթներ սեմինարներում, բաց դասի ընթացքում աշխատանքի փորձի ներկայացում և այլն:

Մեթոդական միավորման հիմնական գործառույներն են.

• դասընթացների, դասերի ձևերի, դասավանդման մեթոդիկայի մշակում ու կատարելագործում,

• ուսման որակի մշտադիտարկում,

• գիտամեթոդական գործառույթ, կրթական գործընթացի գիտամեթոդական ապահովում (դիդակտիկական, տեխնոլոգիական, կառավարչական, ծրագրային և այլն),

• հայտորոշիչ թեստերի մշակումներ,

• ուսուցիչների աշխատանքի և սովորողների գիտելիքների գնահատում,

• փորձի փոխանակման կազմակերպում, առաջավոր փորձի ներդրում, մանկավարժական գիտության նվաճումների իրականացում[4]

• Ծրագրում ընդգրկված բարդություն ներկայացնող հարցերի ուսումնասիրում և այդ կապակցությամբ մեթոդամանկավարժական գրականության իրազեկում,

• Նորմատիվ փաստաթղթերի ուսումնասիրում,

• Նոր դասագրքերի ուսումնասիրում,

• Երաշխավորությունների, հուշագրերի, զննական միջոցների մշակում,

• Միջառարկայական կապերի հարցեր,

• Տետրերի ստուգման հարցեր,

• Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման և տարածման աշխատանք. սեմինարների կազմակերպում՝ գործնականության ապահովմամբ,

• Նպատակային փոխադարձ դասալսումներ, բաց դասեր,

• Ուսուցիչների դասավանդման որակի և սովորողների գիտելիքների մակարդակի ուսումնասիրում և արդյունքների քննարկում,

• Սկսնակ ուսուցիչների հետ աշխատանքի կազմակերպում,

• Քննական նյութի նախապատրաստում,

• Սեմինարներ, խորհրդակցություններ,

• Առարկայական գիտագործնական համաժողովներ,

[4] Առաքելյան Մ., Առարկայական մեթդական միավորումների գործունեության հիմնական ուղղություններն արդի պայմաններում, «Մանկավարժման միտք», Եր., 2015, թիվ 3, էջ 114:

- Ինքնակրթության վերաբերյալ ուսուցիչների հաշվետվություններ,
- Մեթոդական նյութերի և մշակումների համակարգման կազմակերպում. դասապլաններ, ցուցահանդեսներ, թեմատիկ մշակումներ, դիդակտիկ նյութեր, զննական միջոցներ, սովորողների ստեղծագործական աշխատանքներ:

Մեթոդմիավորումը հետևողական է ուսուցիչների հետազոտական-ստեղծագործական աշխատանքի կազմակերպման հարցում, ընդ որում՝ հենց ուստարվա սկզբում են հաստատվում այն հետազոտության թեմաները, որոնք իրականացվելու են ողջ տարվա ընթացքում ինչպես ամբողջ մեթոդմիավորման, այնպես էլ ուսուցիչներից յուրաքանչյուրի կողմից:

Բնականաբար առարկայական մեթոդական միավորումն իր աշխատանքներն կատարելիս հանդիպում է նաև զանազան դժվարությունների: «Կզնակ» հիմնադրամը 2021 թ. կատարել է ուսումնական հաստատությունների մեթոդմիավորուման գործունեության կարիքի գնահատման վերլուծություն: Կարիքի գնահատման վերլուծությանը մասնակցել են ՀՀ շուրջ 1400 դպրոցներից 1285 մեթոդական միավորման նախագահներ:

Ըստ նախագահների ներդպրոցական վերահսկողություն իրականացնելու համար կարիք ունեն հենց իրենց նախագահները.

- Մեթոդական գրականության
- Ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան օրինակելի պլանի
- Հաջողված փորձին ծանոթանալու
- Մենթորի աջակցության[5]

Իսկ հաստատությունում ավելի մեթոդմիավորման աշխատանքներն ավելի համակարգված, բովանդակային և վերահսկելի կազմակերպելու նպատակով հարցման մասնակիցներն ունեն հետևյալի կարիքը.

- Մեթոդական գրականության-70%
- Առկա վերապատրաստման-52%
- Առցանց վերապատրաստման-37%
- Հաջողված փորձին ծանոթանալու -62%
- Մենթորի աջակցության-28%[6]:

Այսպիսով, առարկայական մեթոդական միավորումն ունի կարևոր դեր առարկայի դասավանդման մեթոդների կիրառման արդյունավետության,

[5] https://kznakhimnadram.blogspot.com/2021/05/blog-post_96.html:
[6] Նույն տեղում:

մանկավարժական գործունեության խթանման, ուսուցիչների մասնագիտական իրավասության, մանկավարժական վարպետության, նրա առանձին տարրերի յուրացման համար: Մեթոդական միավորումների առջև դրված են մի շարք կարևոր խնդիրներ, որոնց լուծման համար իրականացվում են տարբեր գործառույթներ:

Գլուխ 2. Առարկայական մեթոդական միավորման դերը ուսուցիչների կայացման գործում

Արևի տակ ուսուցչի մասնագիտությունից
բարձր մասնագիտություն չկա:
Յան Ամոս Կոմենսկի

Ուսուցիչն անցյալի ու ներկայի հասարակական, պատմական փորձն նոր սերունդներին փոխանցող թիվ առաջին անձն է: Նրա դերն անգնահատելի է մարդկային հասարակության և առանձին վերցրած յուրաքանչյուր մարդու անձի զարգացման ու ձևավորման համար[7]: Յուրաքանչուր ուսուցիչ պետք է լինի բազմակողմանի զարգացած և երբեք չդադարի իր գիտելիքների պաշարն ավելացնել: Մեր ժամանակների ուսուցիչն ոչ միայն պետք է ունենա հարուստ գիտելիք, համակողմանի զարգացվածություն և լայն մտահորիզոն, այլև կարողանա իր այդ գիտելիքը դարձնի սովորողի սեփականություն, անընդհատ համալրել նրանց գիտելիքներն, կարողություններն ու հմտությունները:

Ուսուցիչների ջանքերը, որոնք ուղղված են ուսումնական գործընթացի արդյունավետ ընթացքին, միշտ էլ արդարացված են: Դրա վառ ապացույցը սովորողների զանազան նվաճումներն ու ձեռքբերումներն են: Իսկ արգասաբեր գործելու համար ուսուցիչը պետք է կանոնակարգի ու համակարգի իր աշխատանքը՝ անդադար քայլելով նոր մտքերի, կարողությունների, հմտությունների ու տեխնոլոգիաների հետևից: Ուսուցիչին նման հնարավորություն է ընձեռում փոխգործակցային աշխատանքը հանրակրթական ուսումնական հաստատության խորհրդակցական մարմին համարվող առարկայական մեթոդական միավորման ներսում, որտեղ ուսուցիչն ունի անսահմանափակ հնարավորություններ սեփական մասնագիտական պահանջմունքները բավարարելու համար: Մեթոդական միավորումները/առարկայական մասնախմբեր/ ուսումնական հաստատության մեթոդամանկավարժական գործունեության հիմնական կառուցվածքային տարրերն են, որոնք իրականացնում են ուսումնական, դաստիարակչական, մեթոդական և արտադասարանական աշխատանքների համակարգումը դպրոցում:

Ստացվում է, որ մեթոդական միավորումների աշխատանքը բազմաբնույթ է: Այն միտված է ուսուցչի մասնագիտական որակների բարձրացմանը՝ խրախուսելով կոլեկտիվում աշխատելու և համագործակցելու վերջինիս ցանկությունը: Առարկայական մեթոդական միավորման բոլոր անդամներն ունեն հավասարազոր

[7] Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Եր., 2005, էջ 71:

իրավունքներ ու պարտականություններ[8]:

Մանկավարժական այս օղակի գործունեության հենքում մանկավարժական որակների բարձրացումն է, որն ուղղակի կերպով պայմանավորում է ուսումնական գործընթացում կրթական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ի կատար ածումը, ուստի կարելի է ասել, որ յուրաքանչյուր ուսուցիչ կարող է իր օրինակով խրախուսել մյուսին՝ ի նպաստ կրթական համակարգի բարելավման և ուսումնական գործընթացի անցնցում իրականացման:

Ուսուցչի համար գործընկերների հետ համագործակցությունը ևս խիստ կարևոր նշանակություն ունի: Օրինակելի փորձը, որը սկսնակ ուսուցիչը կարող է վերցնել ավագ ու փորձառու գործընկերներից, մեծապես նպաստում է, որպեսզի ուսուցիչն արդեն գործնականում պատկերացում կազմի այս կամ այն խնդրո առարկայի վերաբերյալ: Ուստի սովորել սովորեցնելով բանաձևն այստեղ լայն կիրառելի է: Այն ուսուցիչները, ովքեր ավելի փորձառու են, տեղեկացված են ավելի հետաքրքիր, արդյունավետ և համարձակ դասավանդման մեթոդներին կարող են իրենց փորձով օրինակ դառնալ մյուս գործընկերների համար: Այս պարագայում հավանականությունն ավելի մեծ է, որ վերջիններս կարող են կառուցել արդյունավետ անհատական դասեր և ապահովել շարունակական ուսուցում: Նրանք ի վիճակի են կազմել և ընտրել դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցառումներ, որոնց միջոցով համապատասխանաբար զարգացվում են աշակերտների ըմբռնումը և հմտությունները: Ստացվում է, որ օրինակելի փորձի փոխանակումը կարող է մոտիվացնել սկսնակ, ոչ հմուտ ուսուցիչներին ամեն կերպ գտնել ճանապարհներ նոր հմտություններ ու կարողությունների ձեռքբերման համար: Եվ այս մոդուլները կարելի է օգտագործել առարկայական մեթոդական միավորումների շրջանակերում:

Հանրակրթական դպրոցում ուսուցիչների համագործակցության գործընթացը պետք է իրականացվի անշահախնդիր, մանկավարժն այստեղ չպետք է փնտրի անձնական շահ, հիմնական վերջնարդյունքը պետք է սահմանել՝ հաշվի առնելով սովորողի շահը: Կրթական միջավայրի մարտահրավերները կառավարելու, մասնագիտական կարողունակությունները զարգացնելու, ուսուցման տարբեր ռազմավարություններ մշակելու և իրականացնելու ժամանակ շատ կարևոր է համագործակցային միջավայրի ստեղծումը գործընկեր ուսուցիչների համար: Ուստի ուսուցիչներին պետք է միավորի փոխադարձ վստահությունը, թիմային համերաշխությունը, միմյանց աջակցելու ազնիվ մղումն ու պատրաստակամությունը:

Առարկայական մեթոդական միավորման շրջանակներում իրականացված բազմաբովանդակ գործառույթները օգնում են ուսուցչին համակարգել իր ողջ

[8] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀհանրակրթության մասին օրենք

մարդկային ներուժը, աշխատանքին մոտենալ ստեղծագործաբար, գնալ նոր ու հետաքրքիր գաղափարների որոնման ճանապարհով, ինչի արդյունքում աշխատանքը դառնում է համակարգված ու արդյունավետ: Ուսումնական գործընթացը համակարգվում է, քանի որ մի նպատակի իրագործման համար աշխատում է մանկավարժների ամբողջ մի թիմ, բացառվում է ցանկացած անհատական շահ, բոլորը գործում են՝նպատակ ունենալով համակարգել ուսումնադաստիարակչական գործընթացն ու բարձրացնել կրթության առաջնային շահակիցների՝ սովորողների կրթության որակը:

Կրթության որակը բավականին բարդ ու տարողունակ մի հասկացություն է, որի կարևորությունը շեշտվում է նաև կրթությանն առնչվող միջազգային տարբեր փաստաթղթերում, ինչպես նաև տեղական օրենսդրություններում: Կրթության որակ սահմանելով օրենսդիրները հիմնականում նպատակ են ունենում սահմանել կրթության չափելի արդյունքներ, որոնք, կախված երկրից ու համատեքստից, որոշակիորեն տարբերվում են՝ չնայած նրանք հիմնականում փորձում են դրանք համապատասխանեցնել ՄԱԿ-ի տարբեր կառույցներում կրթության որակի վերաբերյալ ընդունված փաստաթղթերի տրամաբանությանը[9]:

Որակյալ կրթությունը միտված է ապագային և ենթադրում է ոչ միայն նախկինում առկա գիտելիքների ուսուցանում և յուրացում, այլև նոր գիտելիքների ստեղծում անհատապես կամ կոլեկտիվ եղանակով:

Կրթության որակը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ: Դրանցից առաջնահերթն ուսումնառության արդյունքներն են, որոնք պահանջված են սովորողների կողմից և մեթոդական միավորումներն իրենց աշխատանքը պլանավորելիս պետք է հաշվի առնեն կրթության առաջնային շահակիցների՝ սովորողների շահերը:

Ժամանակակից կրթությունն ուղղված է սովորողների մտածողության, մասնագիտական նախաձեռնողականության, ինքնուրույնության զարգացմանը, ինչը կապահովի մրցունակ մասնագետի պատրաստումը: Այդպիսի մասնագետը ունակ կլինի հարմարվել ցանկացած սոցիալական միջավայրին, ծավալել աշխատանքային որոշակի գործունեություն, ինքնակրթվել և ինքնուրույնանալ: Կրթական գործընթացում, որպես երաշխավոր, ինքնուրույն մտածողության ձևավորող ու գործունեության արդյունքների կանխատեսող հանդիսանում է ուսուցիչը: Հենց այդ պատճառով բարձրացել է պահանջարկը որակյալ, ստեղծագործական մտածողություն ունեցող, կոմպետենտ ու նախաձեռնող, մրցունակ ուսուցչի նկատմամբ, ով ունակ է արդի, դինամիկ աշխարհում ձևավորել համակողմանի զարգացած անձնավորություն:

[9] http://ipp.am/wp-content/uploads/2018/01/Research-on-Quality-of-education01.08.2017.pdf, էջ 4:

Աշխատանքը մեթոդական միավորումների շրջանակներում ուսուցչին հնարավորություն կտա արագ ու նպատակային կերպով ձեռք բերել անհրաժեշտ կարողունակություններ, որոնք պարտադիր պայմանն են որակյալ կրթական համակարգ ունենալու համար:

Եզրակացություն

Յուրաքանչյուր պետության համար կարևոր է ունենալ կրթված հասարակություն, ինչ ապահովում է նախ և առաջ դպրոցը: Դպրոցի հիմքում ընկած է բանիմաց և գրագետ ուսուցիչը, որը իր ողջ ներուժը դնում է իր սաներին դարձնելու կիրթ հասարակության հիմքը: Սակայն ուսուցիչն ևս պետք է միշտ կրթվի և զարգացնի իր գիտելիքը: Հիմա քան առավել, երբ օրեցօր զարգացող աշխարհում հարկավոր է մտածող, վերլուծող, քննադատող միտք: Այդ է պատճառը, որ ժամանակակից կրթությունն ուղղված է սովորողների մտածողության, մասնագիտական ինքնակրթության, ինքնուրույնության զարգացմանը: Հետևաբար ուսուցչի մասնագիտական կարողունակությունների զարգացումն արդի կրթական պահանջների հենքն է: Ուստի դպրոցի համար կարևոր է կարողունակ ուսուցիչ ունենալը, ով արագ հարմարվում է փոփոխություններին, կրեատիվ է, կողմնորոշվող, անընդհատ թարմացնում և ավելացնում է իր մասնագիտական գիտելիքները:

Այդ հարթակը իրեն տրամադրում է առարկայական մեթոդական միավորումն, քանի որ մասնագիտական որակի բարձրացման համար շատ կարևոր է նաև գործընկերների հետ համագործակցությունը առարկայական մասնախմբերի աշխատանքների շրջանակներում: Արդյունավետության համար մեծ արժեք են ներկայացնում մեթոդական և առարկայական սեմինարիների մասնակցության շարունակականությունը և փորձի փոխանակումը գործընկերների հետ:Կարևոր է նաև օրինակելի փորձը, որը սկսնակ ուսուցիչը կարող է վերցնել ավագ ու փորձառու գործընկերներից: Պետք է շեշտել նաև ուսուցիչների համագործակցության ու փորձի փոխանակման կարևորությունը դպրոցում, նշենք նաև, որ անչափ կարևոր է, որպեսզի ուսուցիչը չկաշկանդվի համագործակցության կամ փորձի փոխամակման ժամանակ: Այս գործընթացում անչափ կարևոր է նաև փոխադարձ դասալսումների դերն ու ուսուցչի աշխատանքը դպրոցի առարկայական մասնախմբերում:

Հարկավոր է յուրաքանչյուր նրբության և դետալի վերաբերվել լրջորեն և սիրով ինչը էավելի հաճելի կդարձնի աշխատանքը ուսուցչի: Հարկավոր է ինչպես յուրաքանչյուր աշխատանք այնպես էլ առարկայական մեթոդական միավորումներում համակարգված և սրտացավ մոտեցում, ինչի արդյունքում ուսուցիչը կարող է ունենալ մեծ նվաճումներ, հատկապես՝ բարձր ու նոր որակի ուսումնական գործընթաց:

Հարկավոր է ավելի խորացնել մանկավարժական գործունեության գործընկերային հարաբերությունները և կարևոր չի որ դա լինի առարկայական:

Այսպիսով՝ մեթոդական միավորումներն ունեն գործունեության այնպիսի հիմնական ուղղություններ, որոնք նպաստում են դպրոցի զարգացմանը, կրթության որակի բարձրացմանը, ուսուցիչների մասնագիտական կայացմանը և դպրոցի ուսումնական գործընթացի այլ կարևոր խնդիրների ճիշտ ու արդյունավետ լուծմանը:

Գրականության ցանկ

https://www.arlis.am/documentview.aspx?docid=114876 ՀՀ կառավարության որոշում
https://kznakhimnadram.blogspot.com/2021/05/blog-post_96.html:
https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ հանրակրթության մասին օրենք
http://ipp.am/wp-content/uploads/2018/01/Research-on-Quality-of-education01.08.2017.pdf
Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Եր., 2005, 455 էջ:
Առաքելյան Մ., Առարկայական մեթոդական միավորումների գործունեության հիմնական ուղղություններն արդի պայմաններում, «Մանկավարժման միտք», Եր., 2015, թիվ 3, էջ 112-115: